



ԲՈՐԶԱԼՈՒԻ ԳԱԻԱՌ



Ե. ԼԵԼԵՑԵՆԻ

ԱԶԳԱՅՆԱԿՈՒԹԻՒՆ ¹⁾

որչալուի գաւառի բոլոր բնակիչների թիւն է ըստ 1886 թուի աշխարհագրութեան. 13529. Ցուխ. 56180 արական 45667. իգական ընդամենը՝ 101,847 հոգի:

Ըստ ազգութեան

Հայեր.	4218	Տ.	20673	ար.	17159	իգ.	37732.
Թուրքեր.	4929	«	19144	«	13893	«	33037.
Ցուխներ.	2636	«	10031	«	8965	«	18986.
Ռուսներ.	846	«	3095	«	2929	«	6024.
Արաքիներ.	560	«	2304	«	1845	«	4149.
Գերմանացիներ.	272	«	766	«	812	«	1578.
Քրդեր.	41	«	127	«	40	«	167.
Ջան. ազգեր.	26	«	50	«	25	«	75.

Հայերի մի մասը բնիկներ են համարոււմ, միւսը գաղթականներ: Բնիկների մեծամասնութիւնը Հայաստան է, մնացածը վիրախօս. բոլորն էլ լուսաւորչական: Գաղթականներն առանց բացատրութեան Հայաստան են, միայն մեծագոյն մասը լուսաւորչական, իսկ փոքրագոյնը՝ կաթոլիկ:

Հայաստան բնիկների մասին մենք կը խօսենք որքան կարելի է մանրամասնաբար, իսկ վիրախօսների և գաղթականների մասին բաւականաճառ ենք միայն մի քանի պատմական տեղեկութիւններ տալով, որովհետեւ նրանց մասին ազգագրական տեղեկութիւններ հաւաքած ենք, կամ կը հաւաքենք իրենց բուն հայրենիքում ²⁾:

Հայաստան բնիկներ համարոււմ են.

¹⁾ Տես Ազգագրական հանդէս գիրք Է և Ը:

²⁾ Արարազգիների մասին տես իմ «Վարանդա» և «Գանձակի գաւառ», իսկ Ջաւախցիների մասին իմ «Ջաւախք» աշխատութիւնները:

ա. Օձնեցիք, որ բացի Օձուն գիւղից, բնակում եմ նաև Մղարթ, Հաղուի, Թովանանաձոր, Ագարակ, Զաւայի գիւղերում:

բ. Արդունեցիք:

գ. Հաղրատեցիք, որ վերաբնակուել են նաև Աթան և Կիանէլթ գիւղերում:

դ. Սանահնեցիք և Սրնակեցիք:

ե. Դսեղեցիք, որ հիմնել են Ձորագիւղը:

զ. Զնոդեցիք և

է. Վարդարյեցիք:

Այս բնիկները բաժանուած են երկու դասակարգի՝ ազնուականների և գիւղացիների:

Ազնուականներից Արդուիթեան իշխանական տոհմը ապրում է Սանահնում, միւսներն Արդուի, Իգահատ և Սմոճ գիւղերում: Սրանք իրենց բնական գիւղերի և նրանց շրջակայ Հոդերի սեպհակաւատէր են համարում: Իբրև ազնուականներ՝ սրանք ազատ են գիւղացիների վճարած տուրքերից և կրած կոռու բեկեարից, չունին գիւղական տանուտէր և ոչ գիւղական դատարան, այլ ուղղակի ենթարկուած են դատաւարակութիւն և հաշտարար դատաւորին:

Արդուիւնում երկու ազնուական տոհմ կայ 11 գերդաստանից բաղկացած—Լօռու-Մելիքեան և Քալանթարեան. այս երկու տոհմն էլ յաւաքացել են մի գերդաստանից, որ յայտնի չէ, թէ որքան ժամանակ կառավարել է Լօռու բնակիչներին իբր մելիք: Այս տոհմից է Կարսի հերոս՝ կոմս Միքայել Լօռիս—Մելիքեանը, որի որդին այժմ էլ ահագին Հոդեր և անտառներ ունի Արդուի շրջականերում:

Այս միևնույն մելիքական տանից Ամերխանը քալանթարուիւն է ստացել, բնակուել է Լօռու բերդում և տիրել է Ղարադաշի ստորոտից մինչև Դեբեդ և Խրամ գետերի խառնարանը, որի սեբունդն վերակոչուել է Քալանթարեան:

Իգահատի ազնուականները միայն մի տոհմ են կազմում՝ Զահվերդեան և բաղկացած են 60 գերդաստանից, Սրանց նախահայրը ուրացել է քրիստոնէութիւնը և յայտնի չէ պարսից որ շահից ազնուականութիւն և Իգահատ գիւղն է ստացել, ուստիև ժողովուրդը նյան Զահվերդի — շահի տուած—է կոչել: Միառ ժամանակից չեսոյ. ելը պարսից ազգեցութիւնը թուլացել է այս կողմերում, սրանք նորից վերադարձել են հայ եկեղեցու գիրկը, պահպանելով իրենց կալուածներն ու ազնուականութիւնը:

Բանաւոր մի ուրիշ աղբիւր սրանց մասին այլ կերպ է պատմում.— իբր սրանց նախահայրը մի մեծ և հարուստ տուն է կազմել Բջնի գիւղում (Երևանի գաւառում) ուր շատ անգամ Երևանի խանը

Հիւր է եկել: Այս մի անգամ էլ, երբ այդ խանը հիւր գալով սրբապղծել է նրա գերդաստանական պատիւը, առեւանգելով նրա աղջկան, սա, ճանկերդին, սպանել է խանին և փախել ապաստանուել Լճու անմատչելի քարայրերում, և վերջը վրաց Գէորգի թագաւորից այդ քաջութեան համար ազնուականութիւն և Իգաճատ զիւղն ստացել:

Ամռնի ազնուականներն էլ մի տոհմից են սերած և այժմ ինն գերդաստանի բաժանուած: Սրանց մասին ևս առանդաբար պատմում է, թէ ազնուականութիւն և այդ գիւղն ստացել են իրենց մի աղջկից խանին կնութեան տալով:

Ընդհանրապէս կարելի է ասել, որ այս ազնուականները, մանաւանդ Հին սերունդը, բարձրահասակ, չաղթանդամ և գեղեցիկ են:

Գիւղացի բնիկները, ինչպէս երևում է նրանց բարբառի մէջ եղած փոքրիկ տարբերութիւններից, մի ժողովրդի սերունդներ լին, այսպէս օրինակ միայն Օձուն, Մղարթ, Հագուի, Արդուի, Իգաճատ, Ամոն և Յովաննաձոր գիւղերի բարբառը միեւնոյնն է, այս էլ այն պատճառով, որ այս գիւղերից մի քանիսը, ինչպէս տեսնւոյր, Օձունից են զաղթել, իսկ միւսները, ինչպէս Իգաճատը, Արդուին և Ամոնը մօտ լինելով Օձունին՝ միապաղաղուել են: Այն ինչ Դսեղինը փոքր ինչ տարբերում է. Ընդդի և Հագաճատի բարբառը փոքր ինչ նման է Ղազարի բարբառին, Սանահնին և Որնա՝ բարբառը միեւնոյնը լինելով տարբերում է Հագաճատի բարբառից:

Տարբերութիւններ կանտուում են նաև բնակիչների կազմուածքի, սովորութիւնների և հագուստի մէջ:

Ընդհանրապէս բոլորն էլ կոպիտ են, դանդաղկոտ, բայց աշխատասէր:

Վերախօս բնիկները բնակում են հետեւեայ գիւղերում Գորնջուկ, Բային, Վարդիսուրան, Բոսլէվ, Փ. Ռատեան, Զայաամ, Տաբախմեյա կամ Գորուրէտի, Քվէշ, Փ. Բոյնիս, Մեծ Դումանիս¹⁾ Փ. Դումանիս:

Այս վերախօս հայերը պաշտանել են իրենց հայրական տիպը, բոլորովին մոռացել հայերէն լեզուն, գիտեն միայն հետեւեայ խօսքերը՝ խաչ, նշխարհ, սրբութիւն, սրբադրամ, Աւետարան, գրքակալ, օրհնեա տէր և մեղաց Աստծու: Հաւատարիմ մնալով լուսաւորչական կրօնին, սրանք նրա ծիսական մասը բոլորովին փոխել են և ընդունել վրացականը, այսպէս օր. մկրտութեան, պսակի և թաղման ձէ-

¹⁾ Մեծ Դումանիս գիւղում կան նաև Զաւաթից և Ղաբարադից եկած գաղթականներ. վերջիններս, այսինքն Ղաբարադից եկածները, փոքր ինչ գիտեն հայերէն:

սերը միանգամայն նման են վրացականին: Զատ անգամ մեռելը առանց քահանայի են թաղում և ապա, մի առ ժամանակից չետոյ հրաւիրում քահանային թաղման կարգը կատարելու: Զատ հաղիւ են յաճախում եկեղեցի, այն էլ ժամասացութեան աւարտին, որ Լսեռարանը համբուրեն և դուրս գան: Ժամասացութիւնը, ի հարկէ, հայերէն է: Կատարում, միայն երբ քահանան ցանկանում է քարոզել, ստիպուած վրացերէն է խօսում: Հայերէն աղօթքներէց միայն տէրունականը գիտեն, այն էլ մի քանի ձերուներ, թէ և միւսները վրացերէն էլ ճշ մի աղօթք չգիտեն: Ոհա այդ ձերուների գիտեցած հայր մերը.

«Յանուն Հօ և որդօ և վուզունի սրբի»:

Հայր մերի սուրբ եղեցի անուն քու եղիցի սաց մե հանապա զոր թու մեօ, այս օր. զի քո արքայութեն, զօրութեն փառս սախտենիս: Գրեթէ բոլոր սովորութիւնները, բոլոր գործիքները, տների ձևը, հանդերձների տարազը միանգամայն վրացական են: Ըզզանունները վերջացնում են «վիլի» — վրացական վերջաւորութեամբ և հայկական անունների հետ պատահում են նաև վրացականներ, ինչպէս՝ Զիօ, Իվանէ, Իօրգանէ, Աղտոգմիլ (Յարութիւն), Իօպ (Յոր), Իլիկօ, Թալիկօ, Թեկէ, Բաբալէ, Մակա ե այլն:

Իրենք իրենց հայ են համարում և ձերուները հաստատում են, որ իրենց ծնողները հայերէն գիտեցել են:

Գաղթականները գլխաւորապէս եկել են հետեւեալ տեղերից.

ա. Դարարաղից:

բ. Զամշատնից.

գ. Ալաշկերտից.

դ. Կարինից.

ե. Փամբակից և

զ. Ղազարից:

Սրանցից՝

Դաւաթաղի գաղթականները գլխաւորապէս տեղաւորուած են Բոյնիս-Խալէնում և շատամբ Օձունում, Զնոզում և Զահալիում: Բոյնիսի բնակիչները գեթ մինչև այժմ էլ պահպանել են իրենց տոյլը, գաւառաբարբառը, և իրենց առանձնաշատուկ սովորութիւնները, թէ և որոշ չափով ենթարկուել են վրաց ազդեցութեան, օր. կանանց հանդերձները, տների ձևը, գործիքները, սույլը և այլն վրացական են: Օձունի, Զնոզի և Զահալիի դարբաղցիները միանգամայն ենթարկուել են բնիկների ազդեցութեան, որովհետև շատ սակաւաթիւ են եղել և կորցրել են ինչպէս սովորութիւնների, այնպէս և բարբառի առանձնաշատուկութիւնները:

Սրանք գաղթել են 1795 թ. մինչև 1799 թուականը Վրաստան, որտեղից սրանց առաջնորդ Մելիք Ջաճնազարեան Մելիք Զումշուան ու Մելիք-Բեկյարեան Մելիք Ֆրիտոնը գնացել են Պետերբուրգ և ղեկնել Պալ I կայսեր, և նրանից ստացել Մելիք-Զումշուադը Շնոդը, Լոռու և Բորչալուի Հարթուլթիւնների մի մասը, Մելիք-Ֆրիտոնը Օձունը և Մելիք-Շրովը՝ Բոլնիսը։ Այս սրանք իրենց ժողովուրդներով գաղթել են այս տեղերը, սակայն երկար չեն մնացել։ Մելիք Ջաճնազարեան Մելիք Զումշուադը 1805 թ. ծախել է Լոռին՝ Արաստանի լեռնային մասի կառավարիչ կոմս Մուսին-Պուշկինին 6000 ռուբլով և իւր հպատակների հետ վերադարձել Ղարաբաղ, իսկ Մելիք Շրովի և Մելիք Ֆրիտոնի մահից չնոսոյ սրանց ժառանգները առանց կառավարու թիւնից այդ գիւղերի սեպհականատէր չճանաչուելով՝ ստիպուած են եղել թողնել և հպատակների մեծ մասի հետ վերադառնալ Գիւլիստան ¹⁾։

Ջաճնազարեան գաղթականները վերաբնակուած են Մ. Զուլպիբուռմ։ Սրանք գաղթել են Ջամշադնի Կորլս, Քամանդար, Մրէջուք, Ղարամուրադ, Աղբուլադ, Մելիք Զադա, Մմբթլու և Զմեղ գիւղերից Միւլթար քաղանթա ի առաջնորդութեամբ մոտաւորապէս 1800 թուին։ Գաղթելու առիթը եղել է այն, որ Զաւադ-խանը կամեցել է իւր հարեմը տանել Միւլթար քաղանթարի դուռտը Գիւլնազարին (ըստ այլոց Ալիգին)։ Սրանք նախ եկել են Թիֆլիս, չերակ թաղաւորից բնակութեան տեղ ստացել Թիֆլիսի Լաւաբար թաղում և մի առ ժամանակ մնացել այդտեղ։ Այս դարբին Պապը խորհուրդ է տուել Միւլթար քաղանթարին, որ իւր ժողովրդով հեռանայ մի որևէ գիւղ, որպէս զինրա մելիքական իրաւունքները պահպանուեն, ապա թէ ոչ քաղաքում կարճ միջոցում կը կորցնեն իրանց բոլոր արտօնութիւնները։ Միւլթար քաղանթարը լսել է այս Պապի խորհուրդը և կրկին ղեկնելով չերակ թաղաւորին, բնակութեան համար տեղ ստացել Զուլպիբուր, ուր և տեղափոխուել է։ Մի կարճ միջոցից այստեղ է եկել և Մելիք Սարգիսը Զակամից, բերելով իւր հետ իւր ժողովուրդը։ Սրանք բնակուած են առանձին առանձին թաղերում, պահպանելով ինչպէս իրենց գիւղերի անունները, այնպէս և՛ բարբառը։

Շլաւեքեթի գաղթականները վերաբնակուած են Ջաճնազար, Մեծ և Փոքր Ղարաբիլիսա, Զիշթափա և Սարչալետ գիւղերը։ Սրանք բո-

¹⁾ Տես՝ իմ «Գանձակի գաւառը», Ա. հատոր, Բաֆֆի «Դամասի Մելիքութիւններ»։

լորն էլ կաթոլիկ են, և մինչև այժմ էլ պահպանել են իրենց թէ բարբառը և թէ սովորութիւնները: Սրանք 1820 թուին Ուլաշկերտից գաղթել են Ջիրակի Ղի Ղալաքիլիսա, Թափաղուլակ, Քաւթարլու, Հոռոմ և այլ գիւղեր, որտեղից 1822 թուին վերաբնակուել են Բորչալուի վերոյիշեալ գիւղերը:

Կարնոյ գաղթականները վերաբնակած են Ծալկայի Քինիս, Աշխալա, Նարդիվան, Ղուշի, Ոյազմա, Ղոզլու-Քիլիսա, Ոգնի կամ Յոնիա, Բուռնաշէթ, Տաշքաշի գիւղերում: Սրանք 1830 թուին Կարապետ եպիսկոպոսի առաջնորդութեամբ եկել են Մեղրկովկաս, և նոյն, եղրումի փաշայութիւնից գաղթած լոյսերի հետ վերաբնակուել վերոյիշեալ գիւղերում: Սրանք սովորութիւններով և բարբառով բոլորովին չեն տարբերում Քաւախքում վերաբնակուած նոյն գաղթականներից:

Թուրքերը գաղթել են այստեղ Ջահ-Աբասի ժամանակ (1605 թուին) և նրա հրամանով և իրենց ցեղական Բորչալու անունը տուել այն կարթուրեան, ուտեղ բնակութիւն են հաստատել ¹⁾:

Յոյների մի մասը, որ բնակուում է Ուլալէրդի և Շաղղամ գիւղերում, Գրիմիշսանէից (Սնատոյիա) են եկած, միւս մասը, որ բնակութիւն է հաստատել Ծալկայի գիւղերում, Կարնոյ շրջակայքից 1830 թ. եկած գաղթականներ են:

Ռուսներից օրդոգոսները գլխաւոր ապւստիկոպոսեան գնդի պաշտօնաթող զինուորներից են յառաջացած, թէև կան նաև միքանի գաղթականներ Փոքր-Ռուսաստանի գանազան նահանգներից եկած:

Մալականները գաղթել են այստեղ 1846 թուին, Մեծ Ռուսաստանի գանազան տեղերից կրօնական հայաճանքների պատճառով: Իսկ Նոր-Միխայելովկայի բնակիչները Նոր-Պոկրովկայի օրդոգոքսներ էին, որ մալականների աղանդն ընդունելով՝ հեռացան Նոր-Պոկրովկայից և հիմնեցին այս նոր գիւղը մօտաւորապէս 15 տարի սրանից առաջ:

Դուխոբորները գաղթել են Ախալքալաքի գաւառից 1850 թուին, այնտեղի կլիմայի սաստկութեան պատճառով: Իսկ այստեղ նրանք գաղթել էին 1840 թուին Տամբովի նահանգից, Կալմիկովների առաջնորդութեամբ:

Կերմանացիները գաղթել են այստեղ 1818 թուին Վերուսմէրգեան թագաւորութիւնից առանձնապէս հրաւիրուելով Երմովով կառավարչապետից որպէսզի տեղական ժողովուրդներին աշխատասիրութեան օյինակ լինին և սովորեցնեն բնիկներին երկրագործութեան և զինեգործութեան լաւագոյն ձևերը: Սակայն սրանց ապրեցութիւնը

¹⁾ Wachoucht, Description géographique de la Géorgie. trad. par Brosset. p. 141

շատ թույլ է եղել շրջապատող ժողովուրդների վրայ և միակ նկատելին այն է, որ Քոլնիս — Խալենցիք սովորելով սրանցից խաղողի վազի մշակութիւնը նրանցից աւելի են կատարելագործել և այս օր, իրենք գերմանացի գաղթականներն էլ խոստովանում են, որ Քոլնիսցիների այգիները շատ աւելի լաւ են մշակւում, քան իրենցը:

Գերմանական գաղթապաշարից առաջինը՝ Եկատերինէն Ֆելդը՝ հիմնում է գաղթած տարին, 1818 թուին, իսկ Ալէքսանդր Շիլը՝ 1857 թուին, նոյն գաղթականների Թիֆլիսի գաւառի Ելիսավետապոլսի գաղութի բնակիչներին:

Հայ բուսաները նոյնպէս Երբոսմի գաղթականներ են, Հայերի հետ գաղթած: Թափառական կեանք վարելուց յօգնած, սրանք սրանից մի երեսուն տարի առաջ բնակութիւն հաստատեցին Տամալա-խարաբա աւերակում և կազմեցին մի փոքրիկ գիւղ:

Վրացիները բնիկներ են:

Քրդները զանազան ժամանակներում հովութեան պաշտօնով եկած վերաբնակած են զանազան գիւղերում:

Նեխապեղներով Բորչալուի ազգաբնակութեան ներկայ պատկերը, կարևոր ենք համարում անցողաբար քիչել նաև այն գաղթականութիւնները, որ տեղի են ունեցել այստեղից դէպի Հարևան երկրները, փոքր ինչ աւելի պարզ պատկերացնելու Բորչալուի ազգաբնակչական շարժումները:—

Թաթարաց արշաւանքներից լետոյ, երբ Բորչալուի գաւառն էլ տրինով ներկուեց, Լօռի քաղաքը վրաց Ալէքսանդրի (Գէորգու որդու) կողմից տրուեց Սիւնեաց տէր Պելզինէ Օրբէլեան իշխանին. որովհետեւ նրա փեսան էր: Այս պատճառով տեղական Հայ բնակիչներն ամենայն կոյմից սկսեցին գաղթել նրա, Պելզինի, որպէս Հայ իշխանի երկրները: Ալէքսանդր թագաւորը վախենալով, թէ մի գուցէ Պելզինի մօտ գաղթեն նաև վրաց քաղաքների ու գիւղերի, ինչպէս և Քամշուղէ քաղաքի Հայերը. մանաւանդ որ միմիայն այս վերջինում 20,000 չափ Հայեր կային, Ամնագին անունով մի կաշառուած Հայի ձեռքով 1436 թուին թունաւորեց Պելզինին: Սակայն այսպիսով գաղթականութեան առաջը չկարողացաւ առնել: Հետեւեալ տարին նա հրաժարուեց Հարկ վճարել պարսից Քահնաշահին, ուստի և սա անհամար զօրքով մտաւ Գուգարք, ահագին բազմութիւն գերի տարաւ և առաւ Քամշուղէ քաղաքը: Բայց դեռ քաղաք չմտած 1664 մարդու գլուխ կտրել տուեց և նշանով քաղաքի հանդէպ մի ամբարտաւ կանգնեց, վախտւն եկեղեցականների և իշխանների քաղաքի դռան առաջ մորթել տուեց, իսկ քաղաքի մէջ 3000 հոգի զանազան տանջանքներով

սպանել տուեց և 9400 հոգի գերի տարաւ, բացի նրանցից, որոնց քաղաքից դուրս գտնելով՝ արդէն տարել էին ¹⁾։

Այս ծանր հարուածից հաղիւ սթափուել էր Գուգարբը, երբ 1605 թուին տեղի ունեցաւ Հայերի գաղթը դէպի Սպահան Ճաւ-Սքասի հրա-մանով և շատ լուեցիներ ևս չկարողացան խուսափել այս ընդհանուր շարիքից։

Մնուհետեւ թէ՛ և տեղի չունեցան մեծ, աշխարհաւեր կոտորածներ կամ գաղթականութիւններ, սակայն շարունակ կամ պարսիկները կամ օսմանցիները կամ լեռնական ափսաղներն ու աւարացիները յանկարծակի չարձակումներով քանդել, աւերել են Բորչալուի գաւառը, բնակիչներին սրի անցկացրել և դերել. չիշենք այսպիսի արշաւանքներից մի քանիսը։—

1712 թուին Ուլի Սուլթանը, որ տիրում էր Ղախի, Ճարի և Զաքաթայայի նահանգներին, պարսից պետութեան դէմ ապստամբելով ասպատակեց «գլխորդ երկիրն Գուգարաց» և այնուհետեւ ամենայն տարի չարձակում, կողոպտում և գերի էին տանում ²⁾։

1719 թուին լեզգիներին մի խումբ Սուրխայի առաջնորդութեամբ Գուգարբով անցաւ Վրաստան և ասպատակեց ու գերեց Սեմխէթի և Դմանեսաց գաւառները ³⁾։

Նույն թուին Կովկասի լեռնական լեկզիները «իրեւ անձրեւի տարափ» թափուեցան Հայաստանի և մասնաւորապէս մեր գաւառի վրայ։ Լուեցիներից շատերը ապաստանեցան Աղէկի այրում, և երբ լեզգիները չկարողացան ձօտենալ նրանց, արա մերձակայքից հաւաքեցին փեթակներ և այրի առաջ վառեցին։ Ծուխը և զայրացած մեղուները դաան ծակերից ներս մտան այրը և խեղդեցին և կծոտեցին խեղճ ազատաւնուածներին. ոմանք էլ ուշաթափ վաչր ընկան։ Այս ժամանակ լեզգիները սանդուղ դնելով մտան այրը, ուշաթափուածներին սպանեցին, իսկ կենդանի մնացած երին բոլոր ունեցածներով գերեցին, և հէնց հիմայ էլ այդ այրը, լի է մարդկանց ոսկորներով ⁴⁾։

Իրինյւն այժմ էլ ժողովրդի չիշողութեան մէջ մնացել է այս սոսկայի անցքի պատմութիւնը. միայն ոմանք պատմում են, թէ ծխով են առել այրը, ոմանք էլ ասում են, թէ մօտակայ ջրաղացի ջրաղացպանին մահուան երկիւղով ստիպել են խնդրել ապաստանուածներին բանալ այրի դուռը գիշեր ժամանակ և իրեն ներս առնել, և երբ նրաւք բացել են, լեզգիներն էլ ներս են խուժել և սկսել կոտորել։

¹⁾ Զամխան. Պատմ. Հայոց. Գ. հ. եր. 470—472

²⁾ Դիւան Հայ. Պատմ. Գ. Գ. եր. 722.

³⁾ Դիւան Հայ. պատմ. Գ. Գ. եր. 723.

⁴⁾ Դիւան Հայոց պատմ. Գ. Գ. եր. 717.

1785 թ-ի օգոստոսին Աւարացիների Օմար խանը մտաւ Բորչալուի գաւառը, առաւ Ախտալան, թալանեց և քանդեց արծաթի և ոսկու դործարանները և հրաշալի եկեղեցին, գերեց մինչև 860 հոգի տառաւիապէս այստեղի դործարաններում աշխատող յոյներից, և սպանեց մինչև 640 հոգի նրկու սեւից:

Ապա եւղևորուելով դէպի Լօռի, նա բանակեց Ուզունլարի մօտ, և գորքեր ուղարկելով այրեց թալանեց Լօռու շրջակայ գիւղերը: Հետևյալ թագաւորը, որ քաջ առ քաջ հետևում էր նրան, առանց համարձակելու նրա վրայ չարձակուիլ, որովհետև քիչ գորք ունէր, այս ժամանակ գտնւում էր Աղջա-Ղալալի մօտ: Այստեղից նա 70 որսորդ ուղարկեց Լօռի բերդն ամրապնդելու: Օմար խանը Ուզունլարից անցաւ դէպի Լօռի, չարձակուեց նրա վրայ և ընդդիմութեան հանդիպելով անցաւ դէպի Ախալքալաք ¹⁾:

1787 թ-ին Ջուշու Իբրահիմ-խանի գրգռմամբ Բորչալուի գաւառից մօտ 3000 հոգի թուրքեր գաղթեցին Ղարաբաղ: Պրաց ներակ թագաւորը նրանց չետ դարձնելու համար գնաց Գանձակի վրայ և վերջերք՝ Իբրահիմ խանի խոստման համաձայն, կամենում էր Մելիք Մէջլումին և Մելիք Աբովին շղթայած Շուշի ուղարկել, որպէսզի գրանց փոխարէն Իբրահիմ խանը վերադարձնէ այդ 3000 բնակիչներին, սակայն այս բոլոր ջանքերը անպարզիւն անցան ²⁾:

¹⁾ Бутковъ. Матеріалы для Новогісторіи Кавказа II ч. 181—182.

²⁾ Դիւան Լայ. Պատմ. Ա. հր. 11. Բաթիի խաւսալի մեկէք. հր. 116.